

## Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ԱՋԱՐՅԱՆ

*/ավազանի անունը՝ Արսեն/*

*Ծնվել է 1970 թ. նոյեմբերի 17-ին Գավառ քաղաքում: 1977-87 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1987-ին ընդունվել է Երևանի Ճարտարապետական-շինարարական ինստիտուտ: 1992 թվականին ավարտել է՝ ստանալով ճարտարապետի որակավորում: 1990 թվականից Գավառի Ս. Աստվածածին եկեղեցու ծիսական խորհրդի ատենապետն է: 1993-96 թթ. ծառայել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: 1995 թ. հուլիսի 9-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի: 1996 թ. հունիս ամսից տեղափոխվել է ծառայության Գեղարքունյաց թեմ՝ Գավառի Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղ և ձեռնադրվել է քահանա սեպտեմբերի 29-ին՝ ձեռամբ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի: Ծառայության է կոչվել Գավառի Ս. Աստվածածին եկեղեցում:*